ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

HEAD OF LOGISTICS SUPPORT DEPARTMENT OF MINISRTY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email: depart@mil.am
Հեռ.՝ (+37410) 29-45-45
Ֆաքս՝ (+37410) 29-46-13

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванд 5,
Email: depart@mil.am
Tel.Тел.: (+37410) 29-45-45
Fax.Факс: (+37410) 29-46-13

№ ՆՏԱԴ/1041
"23" 03 2020թ.

«Ջի Թի Սի» ՍՊԸ-ի տնօրեն
Է. Փոթոյանին
Ք. Երևան, Արովյան փ. 23
էլ. հասցեն՝ gtc.llc@yandex.ru
ՀՎՀՀ 02677537

ՀՀ պաշտպանության նախարարության և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի միջև 19.02.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-9/9-7 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 12.04.2019թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2019թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները՝ նշված քանակներով՝

| Ապրանքի անվանում | Չ/մ | Քանակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 29.11.19թ | Չմատակարարված քանակ |
|---|---|---|---|---|---|
| Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ), amoxicillin (amoxicillin trihydrate), clavulanic acid (potassium clavulanate) | հատ | 20,000 | 10,000 | 10,000 | 20,000 |
| Իմունոգլոբուլին հակաստաֆիլակոկային | հատ | 20 | 10 | 10 | 20 |

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.03.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և Համաձայնագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել ***92,813 (իննսուներկու հազար ութ հարյուր տասներեք) ՀՀ դրամ***՝ որպես Պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև տուժանք՝ ***304,301 (երեք հարյուր չորս հազար երեք հարյուր մեկ) ՀՀ դրամ,*** որպես պայմանագրի կատարման ապահովում Պայմանագրի գումարի 10%-ը՝ 900005000758 հաշվեհամարին:

Ն. ՑՈՒԼՉՅԱՆ